ՊԱՅՄԱՆԱԳԻՐ-22
ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան « 17 » հունվարի 2022թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն), ի դեմս Նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ Վահրամ Գասպարյանի, որը գործում է Նախարարության կանոնադրության հիման վրա մի կողմից, և «Բնակարան երիտասարդներին» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն), ի դեմս գործադիր տնօրեն Տիգրան Միրզոյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, հետագայում միասին հիշատակելիս՝ Կողմեր, հաշվի առնելով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 2121-Ն որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին», ինչպես նաև 2022 թվականի հունվարի 14-ին Կողմերի միջև կնքված Փոխըմբռման Հուշագիր-22-ը, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով սահմանվում է «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագիր» ծրագրի «Ուսումնական վարկերի տոկոսավճարների մասնակի փոխհատուցում» միջոցառման շրջանակներում պետական աջակցության տրամադրումը (***այսուհետ՝ Ծրագիր***), որի շրջանակներում Ընկերությունը իրականացնում է 2022 թվականի հունվարի 14-ին Կողմերի միջև կնքված Փոխըմբռման Հուշագիր-22-ով (**այսուհետ՝ *Հուշագիր***) սահմանված սուբսիդավորման գործընթացի (**այսուհետ՝ *Միջոցառումներ***) կազմակերպումը:

2. Հիմնական դրույթներ

2.1 2022 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով հատկացվող պետական աջակցության առավելագույն չափը կազմում է մինչև 92 973 900 (իննսուներկու միլիոն ինը հարյուր յոթանասուներեք հազար ինը հարյուր) ՀՀ դրամ:

2.2 Հատկացվող միջոցներն ուղղվում են ***Միջոցառումների*** իրականացմանը՝ համաձայն ***Հուշագրով*** սահմանված կարգի:

2.3 Նախարարությունը 2.1 կետում նշված գումարը ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 2121-Ն որոշմամբ հաստատված համամասնությունների համաձայն փոխանցում է Ընկերության ՀՀ կենտրոնական բանկում գտնվող հատուկ հաշվին՝ ***Հուշագրի*** դրույթներին համաձայն:

3. Մոնիթորինգ

3.1 Նախարարությունը ***Հուշագրով*** սահմանված կարգով կարող է իրականացնել ***Միջոցառումների*** գործընթացի մոնիթորինգ:

3.2 Նախարարությունը կարող է, մոնիթորինգի իրականացման նպատակներից ելնելով, Ընկերությունից պահանջել ***Հուշագրով*** սահմանված հաշվետվություններ, ինչպես նաև գործառույթին վերաբերող այլ հաշվետվություններ և փաստաթղթեր:

3.3 Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է նաև իրականացնել մոնիթորինգ Ընկերության տարածքում՝ նախապես Ընկերությանը ծանուցելով ժամկետների և լիազորված անձանց շրջանակի մասին:

3.4 Մոնիթորինգի իրականացման ընթացքում Ընկերությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

3.5 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Ընկերությանը տրվում են առաջարկություններ:

4. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

4.1 Նախարարությունը իրավունք ունի՝

4.1.1 Ստուգել Ընկերության կողմից իրականացվող ***Հուշագրով*** սահմանված միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց խոչընդոտելու վերջինիս գործունեությանը,

4.1.2 Ընկերությունից պահանջել հաշվետվություններ և/կամ լրացուցիչ տեղեկություն հեռակա ստուգման նպատակով՝ նախապես իրազեկելով Ընկերությանը դրանց ձևի և ժամկետների վերաբերյալ,

4.2 Ընկերությունն իրավունք ունի՝

4.2.1 սույն պայմանագիրը ուժի մեջ մտնելու պահից Նախարարությունից պահանջել սույն պայմանագրի 2.1 կետով սահմանված գումարը՝ համաձայն 2.3 կետով սահմանված ընթացակարգի:

4.3 Նախարարությունը պարտավոր է՝

4.3.1 ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Ընկերությանը.

4.3.2 իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

4.4 Ընկերությունը պարտավոր է՝

4.4.1 իրականացնել ծրագրի շրջանակներում Նախարարության կողմից տրամադրված գումարների պատշաճ օգտագործում՝ համաձայն ***Հուշագրով*** նախատեսված դրույթների, և ֆինանսական միջոցներն օգտագործել միայն ծրագրի նպատակներին համաձայն,

4.4.3 կատարել Նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

5.1 Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Պայմանագրի գործողության ժամկետը, փոփոխումը, դադարումը և(կամ) լուծումը

6.1 Պայմանագիրը և դրանից ծագող պարտավորությունները ուժի մեջ են մտնում դրա կնքման պահից, տարածվում են 2022 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա: Պայմանագիրը գործում է մինչև պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

26987

6.2 Պայմանագրի փոփոխումը և (կամ) լրացումը կատարվում է Կողմերի համաձայնությամբ՝ լրացուցիչ համաձայնագրով, որը Պայմանագրի անբաժանելի մասն է:

6.3 Պայմանագիրը դադարեցվում և (կամ) լուծվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Այլ պայմաններ

7.1 Պայմանագրում ցանկացած փոփոխություն և (կամ) լրացում կատարվում է գրավոր:

7.2 Պայմանագիրը կազմված է հայերեն, երկու հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

7.3 Պայմանագրով Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմերի իրավաբանական տվյալները և ստորագրությունները

Ընկերություն	**Նախարարություն**
«Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՀՀ, ք.Երևան, Հանրապետության 22/13	ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2
Հեռ.՝ 010 56 07 43	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ900011033363 ՀՎՀՀ 02698732
Գործադիր տնօրեն՝ ---------- Տիգրան Միրզոյան	Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ ---------- Վահրամ Գասպարյան